ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/17» ծածկագրով գնանշման հարցումով Աբովյան քաղաքի փողոցների, մայթերի, բակերի փոսային նորոգման և ասֆալտապատման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Աբովյան

18/07/2017թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գուլոյանը (ԳՊ/ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Խաչատրյանը (ԳՊ/ԲԱ), Լ. Շառաջյանը (ԳՊ/ԲԱ),
Ջ. Սարգսյանը (ԳՊ/ԳԱ), Ա. Զոբանյանը (ԳՊ/ԳԱ)
Քարտուղար՝ Տ. Զոհրաբյանը (ԳՊ/ՄՀմ)

Պատվիրատուն՝ Աբովյանի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր. 1 հասցեում, ստորև ներկայացնում է «ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/17» ծածկագրով Աբովյան քաղաքի փողոցների, մայթերի, բակերի փոսային նորոգման և ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցումով գնման ընթացակարգի բացման նիստի մասին համառոտ տեղեկատվություն:

1. «ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/17» ծածկագրով գնանշման հարցումով ընթացակարգի հայտերի բացման մասին
Մ. Գուլոյան

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով 2017 թվականի հուլիսի 18-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. Տեղեկատվություն գնման առարկայի ընդհանուր գնի և հայտեր ներկայացրած մասնակիցների հայտերի մասին
Մ. Գուլոյան

2.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված՝ 699 600 (վեց հարյուր իննսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2.2 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի		
Հ/հ	Անվանումը	Էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսի համարը
1	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	ekspertizaproektov@mail.ru
2	«ՏԵԽՇԻՆ» ՍՊԸ	Texshin-ltd@rambler.ru
3	«Քարազարթ» ՍՊԸ	qarazart2010@mail.ru
4	«Մառք» ՍՊԸ	mirgazshin@gmail.com

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. Տվյալներ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների մասին
Մ. Գուլոյան

ՀՀ դրամ

Մասնակցի անվանումը	Մասնակիցների կողմից առաջարկված գները, ընդ որում՝		
	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը*	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	80 000	16 000	96 000 (ինսունվեց հազար)
«ՏԵԽՇԻՆ» ՍՊԸ	375 000	-	375 000 (երեք հարյուր յոթանասունհինգ հազար)
«Քարազարթ» ՍՊԸ	200 000	-	200 000 (երկու հարյուր հազար)
«Մառք» ՍՊԸ	274 000	-	274 000 (երկու հարյուր յոթանասունչորս հազար)

*Առաջարկված գինը (առանց ԱԱՀ-ի) մասնակիցների կողմից www.armeps.am կայքի միջոցով ներկայացված գինն է:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին
Մ. Գուլոյան

4.1 «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ -ի և «Քարազարթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

4.2 «ՏԵԽՇԻՆ» ՍՊԸ-ի և «Մառք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ N 2 հավելվածի, մասնավորապես այն բացակայում է:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4.3 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել սույն նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «ՏԵԽՇԻՆ» ՍՊԸ –ին և «Մառք» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև 2017 թվականի հուլիսի 19-ը, ժամը 10:00-ը շտկել արձանագրված անհամապատասխանությունը հրավերով սահմանված ձևով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի

նախագահ՝ *Մ. Գուլոյան*

անդամներ՝ *Ջ. Սարգսյան*

Ա. Զոբանյան

Լ. Շառաջյան

Գ. Խաչատրյան

Քարտուղար՝ *Տ. Զոհրաբյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

«ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/17» ծածկագրով գնանշման հարցումով Աբովյան քաղաքի փողոցների, մայթերի, բակերի փոսային նորոգման և ասֆալտապատման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Աբովյան

19/07/2017թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գուլոյանը (ԳՊ/ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Խաչատրյանը (ԳՊ/ԲԱ), Լ. Շառաջյանը (ԳՊ/ԲԱ), Ջ. Սարգսյանը (ԳՊ/ԳԱ), Ա. Զոբանյանը (ԳՊ/ԳԱ)
Քարտուղար՝ Տ. Զոհրաբյանը (ԳՊ/ՄՀմ)

1. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի) անհամապատասխանությունների շտկման մասին

Մ. Գուլոյան

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՏԵԽՇԻՆ» ՍՊԸ-ն և «Մառք» ՍՊԸ-ն էլեկտրոնային եղանակով տեղեկացվել են հայտի N 2 հավելվածում առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ: «Մառք» ՍՊԸ-ն շտկել է հայտի անհամապատասխանությունը, իսկ «ՏԵԽՇԻՆ» ՍՊԸ-ն չի շտկել:

2. Տվյալներ ներկայացված հայտերի գնահատման արդյունքների և մասնակիցների զբաղեցրած տեղերի մասին

Մ. Գուլոյան

2.1 Հանձնաժողովը հանձնաժողովը որոշեց.

Գնահատել բավարար «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի, «Քարազարթ» ՍՊԸ-ի և «Մառք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը: Ներկայացված և բավարար գնահատված հայտերի հիման վրա առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել հետևյալ մասնակիցներին.

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	Մասնակցի անվանումը	Մասնակիցների կողմից առաջարկված գները, ընդ որում՝		
		Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	80 000	16 000	96 000 (իննսունվեց հազար)
2	«Քարազարթ» ՍՊԸ	200 000	-	200 000 (երկու հարյուր հազար)
3	«Մառք» ՍՊԸ	274 000	-	274 000 (երկու հարյուր յոթանասունչորս հազար)

2.2 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց.

Մերժել «ՏԵԽՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին

Մ. Գուլոյան

3.1 Հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում:

3.2 Շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակել տեղեկագրում:

3.3 էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

3.4 Կոմիտեից տեղեկատվության տրամադրման վերջնաժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ Մ. Գուլոյան

անդամներ՝ Ջ. Սարգսյան

Ա. Չոբանյան

Լ. Շառաջյան

Գ. Խաչատրյան

Քարտուղար՝ Տ. Զոհրաբյան